

Թեան վրայ աշխարհ հիւսցու ներու :
 Գործելու համար բնաւ մարդ մարդ աւ
 չպատեց , ամենքն ալ միևնոյն կեանքն
 և միևնոյն կերպով սկսան 'ի գործ գը
 նել ինչ որ սրտերնին կըզգար , ըստ
 որում այսպէս կընկարագրէ Սուրբն
 Լչդիշէ անոնց վտեմ եւանգը և գործի
 սկսելու եղանակը . « Աչ երեւէր այ
 նու հետեւ առաւել տէր ' քան զձա
 ուս , և ոչ ողատ փափկացեալ քան
 զգեղուն . և վրայեալ , և ոչ որ քան զոր
 նուարեալ յարու թէ : Սի սիրտ յոժտ
 րու թեան ամենեցուն արանց և կու
 նանց , ծերոց և տղայց և ամենայն
 միաբաներց 'ի Վրիտտոս : Առ հասա
 ռակ զմի գինու որու թիւն գինու որե
 ցան և զմի սպակ զրահս հաւատաց
 պատուիրանն Վրիտտոսի , միով ԿՕ
 տեաւ ճշմարտութեան պնդեցին զմէ
 ջըս արք և կանայք » .

(Պիտի շարունակութի) :

ԿԵՆՍՍՍԳՐՈՒԹԻՒՆ ՊՐՍԳՍԼԱՅ

(Շարունակութիւն : տես թիւ 10) :

Այս խօսքերը այնքան կը գրգռէր
 զմեզ որ երբեմն կ'առաջագրէ ինք հա
 սարակաց չքաւ որու թիւեր կամ կարօ
 տութիւնը լեցունելու : համար ընդհա
 նուր օրէնք կամ կանոններ չլինել մէջեր
 նիս , սակայն եղբայրս ասոր հաւանու
 թիւն չէր տար , ըսելով թէ մեք մաս
 նաւորի կոչուած է ինք , և ոչ թէ ընդ
 հանուրի . և թէ՛ ինչը այնպէս կը հա
 լաստար որ Աստուծոյ առաւել հաճնլի
 է աղքատաց ծառայութիւն մատու
 ցանել աղքատութեն , այսինքն իւրա
 քանիւր մարդ իւր կարողութեան
 համեմատ , առանց ինքնինքը այն մե
 ծամեծ նպատակներուն ոգւով ներ
 կայացնելու , սին որ այն աւելագան
 ցութենէն յառաջ կուգայ , որուն հե
 տապօտութիւնը ըստ ամենայնի կը

պարտաւ էր : Այսպէս խօսելով ոչ թէ
 իրեն միայն այն էր որ հաստրակաց
 համար աղքատանցներ հաստատելը
 վնասակար է , ընդ հակառակն ասոր
 համար մեծ սէր ունէր , ինչպէս տես
 նուեցաւ իրեն բրած կտակէն , այլ կ'ը
 սէր թէ այնպիսի մեծամեծ ձեռնար
 կու թիւնները քանի մը անձանց յառ
 կացեալ էր , զորս Աստուած գրեթէ
 աներեւու թաղէս գէտ պ 'ի այն կ'ա
 ռաջնարդէ , և ոչ թէ ամեն մարդկան
 ինչպէս հանապազօրեայ և մասնաւոր
 օգուաները որք կ'ըլլան աղքատաց :

Այսուտիկ մէկ մասն է ասիկայ այն
 կրթական դատերուն , զոր մեզ կ'ա
 լանդէր այդ առարկնութեան գոր
 ծադրութեան հրաւիրելու համար ,
 առարկնութեան՝ որ իւր սրտին մէջ
 մեծ տեղի մը ունէր , և այս փոքր օրի
 նակ մ'էր , որ մեզ տեսնել տուաւ
 իւր մարդասիրութեան մեծութիւնը :
 Իւր սրբութիւնը կամ անմեղութիւ
 նըն ալ փոքր բան մը չէր , և այնքան
 կը յարգէր այս առարկնութիւնը , որ
 կըզ , ուշանար շարունակ թէ չըլլայ որ
 կամ իրեն մէջ և կամ ուրիշներուն վե
 րաւորի այն , և անհաւատարի է իրեն
 այս նպատակին համար ունեցած ճիշ
 դութիւնը : Ասոր վրայ նայն իսկ ես
 վախի մէջ էի , որովհետեւ ամեն խօ
 սածներս կը սագտանէր զորս ես անմեղ
 կը կարծէի , և որոց սխալ ըլլալը յետոյ
 ինձ կը ցուցունէր : Այնպէս պատահմամբ
 երբեմն ըսէի թէ այսօր գեղեցիկ կին
 մը տեսայ , բարկանալով կ'ըսէր ինձ թէ՛
 պէտք չէր երբէք սպասաւորաց և ե
 ռիտասարդ անձանց առջեւ այդպիսի
 խօսքեր ընել , իսկ ես չէի իմանար թէ
 ասով ինչ մտածութիւն կրնայի գրգը
 ռել անոնց մէջ : Կը գոգոհէր նա դար
 ձեալ այն գրգանաց համար , զոր իմ
 զաւակներէս կ'ընդունէի , և կ'ըսէր որ
 ասիկայ անոնց վնասակար ըլլալէ զատ

օգուտ չունի, և թէ մարդ կրնայ ուրիշ հազար տեսակ միջոցներով սէր ցոյց տալ իւր գաւախաց, ուստի զիս կը յորդորէր որ այս սովորութիւնը ջնջելմէ Վստիք են ահա այն բարձր դասերը զորս ինձ կուտար, և ահա այս քան արթուն կը հսկէր անմեղութեան վրայ թէ իրեն և թէ ուրիշներուն մէջ:

Արդօրս մահէն երեք ամիս գրեթէ առաջ իրեն դէպք մը պատահեցաւ, որ անոր ամենազգալի ապացոյցն եղաւ, և մի և նոյն ժամանակ եղբօրս սքանչելի ու զարմանալի մեռնութիւն տեսնուեցաւ: Արք եղբայրս պատուարացէն կը վերադառնայր, տասն ու հինգ տարեկան խնամ գեղեցիկ օրիորդ մը իւր մօտ եկաւ սղորմութիւն խնդրելու, այսպիսի որտալարժ տեսարանէ մը եղբօրս սիրտը շարժեցաւ տեսնելով այս ազ քատուհանն այսպիսի վտանգի մը ենթարկուելը. յետոյ հարցուց անոր ով ըլլալը, և այն ստիպողական պատճառը, որով ուղարմութիւն խնդրելու եկած էր. և երբ խնայաւ որ նա գեղը կը բնակի և զեր, իւր հայրը մեռեր է և թէ մայրն ալ հիւանդանոցով այն օրը եկեղեցւոյ հիւանդատունը տարուէր է, հաւատաց որ Վստուած էր որ զասկից իրեն առաջին կարօտութեան մէջ իւր մօտ զըկած էր անոր օգնութիւն մը ընելու. և նոյն ժամէն անմիջապէս տարաւ օրիորդը գիշերութիւն վարժարան, ուր բարի քահանայի մը յանձնելով, և որքան որ պէտք էր արծաթ տարլով աղօղեց անոր խնամ տանել, և դնել զայն ապահով վիճակի մը մէջ, ուր կրթութի օրինաւորապէս իւր երեսուսարդութեան պատճառաւ: Այս բոլոր հագք քահանային վրայ չը թողլու համար. ըսաւ անոր որ վաղը առաւօտ քեզ կին մը կը զրկեմ, որքին հագուտաները գնելու և հագալու իրեն հետ այն ամեն կարևոր բա

նեքը, որով օրիորդը այնպիսի վիճակի մէջ մտնէ, որ կարողանայ ծառայել վերակացու հւոյ մը: Վստուածան զըրկեց եղբայրս կին մը որ այս բարի քահանային հետ աշխատելով և անոր հագուտիք բաները շտկելով զներք օրինաւոր և վայելուչ վիճակի մը մէջ գրին: Այս եկեղեցականը՝ կնոջինն այս մարդատիրութիւնը ընողին անունը հարցնելով, կնոջ անոր ըսաւ. որ հրաման չունէր յայտնելու, միայն թէ երբեմն երբեմն պիտի գար ինքը օրիորդին պիտոյից հագացողութեանը մասնակցելու, որով քահանային հետաքրքրութիւնը աւելցաւ. նա աղօղեց կնոջը. որ անոր անունը իրեն ըսելու չնորհր ընէ. «Այս, ձեզ խօսք կուտամ կըսէր քահանայն, թէ քանի որ այն մարդը կենդանի է՝ այս կրողութիւնը չեմ յայտնէր, և եթէ Վստուածոյ անօրինութեանքը ինձէ առաջ նա մեռնի, պիտի աւնենամ այսպիսի գեղեցիկ գործ մը հրատարակելու միջխարութիւնը. ես չեմ ուզեր որ այս գործը մտապալութիւն դատուարարուի ու: Այս պէս սհա այս դիպուածով այն բարի քահանայն առանց եղբայրս ճանաչելու կը տեսնէր թէ մըջափ հիանալի է անոր մարդատիրութիւնը և անմեղութեան համար ունեցած սէրը:

Արդայս շատ գորով և սէր կը ցուցնէր նահաւ մեզ, սակայն չափազանց չէր այս, և այս աւելի յայտնի ըլլալէ քրոջ մահուամբը, որ տասն ամիս իջ մահուանէն յառաջեց. երբ այս բարք լսեց եղբայրս՝ միայն այս խօսքերը ըստաւ. «Թող Վստուած այնպիսի բարի մահուամբ կոչէ զմեզ առ ինքն. և այսպէս միշտ հըւ և հնազանդ էր Վստուածոյ նստախնամութեան օրէնքներուն, և միայն կը խորհրդածէր այն մեծամեծ շնորհաց վրայ որով Վստուած շտապուցած էր քոյրս իր կենդանու

Թեան ժամանակ, և յայտնի պարագա
ներով փայլեցաւ մահուան միջոցին .
Ընդ համար էր որ անգաղար կը կրկ
ներ . « Երանի անոնց , որոնք ՚ի Տէր կը
ննջեն » . և երբոր զիս այս կորստեան
համար աստիկ ցաւոց մէջ կը տեսնէր
շարունակ , կը բարկանար և կ'ըսէր որ
պէտք չէ երբէք արգարոյ մահուան
համար այսպիսի զգացումներ ունե
նալ , և մահուանդ պարտաւոր ենք
զ'ըստուած փառաբանել այս մասին ,
որ այնքան վարձատրած էր քոյրս իր
մատուցած փոքրիկ ծառայութեանց
փոխարէն .

Երբայրս մեզ ցոյց կուտար այս
պէս , որ ինքը՝ ոչ մէկուն հետ անբախ
տելի կապ մը չունի , թէպէտ և իւր
նիւթընկերք ըլլան , ինչպէս էր քոյրս , զոր
աշխարհիս վրայ ամենէն շատ կը սիրէր .
Բայց այս չափով ալ գոհ չէր ըլլար ,
այլ ինքը շունենալէն զինի , չէր ուզեր
ամենեւին որ մէկը այգուսի չափա
զանց սիրոյ կտայ մը դէպ ՚ի իւր անձը
ցուցնէ . Խօսքս այն մեղանշական և
զմանգաւոր կապերուն վրայ չէ , ու
ըովհետեւ այս աշխարհ ամենայն յարու
նապէս կը տեսնէ , այլ ամենէն անմեղ
բարեկամ միութեան՝ զոր և կանոնա
ւորութիւնը ունենէ կը բաղձար . որպէս զի
առիթ մը չը աայ այդ մասին , և մա
նածանդ արգիլէ՝ և որովհետեւ չէի
խնայար ես թէ ինչ միտք ունի ասի
կոյրս որոտորի քորորորին զարմոյցած էի
այն . քանի որ ինչ ըրած մերժմանց՝ վե
րայ որոնց համար գանգատանքը կ'ըսէ
ի թէ՛ անդրապարս զիս չը սիրէր և կարծես
թէ իրեն մահաճառ թիւն կը պատճա
ռեմ՝ նոյն իսկ այն ժամանակ՝ երբ իւր
հիւանդութեան մէջ իմ սիրայօժար
ծառայութիւններս կը մտաուցանեմ
իրեն » . Բայրս շտապաբանց կը սխալիք
կ'ըսէր ինձ , և ընդ հակառակն կը հաս
տատուէր որ այնքան մեծ սէր ունէր առ

իս , որքան ես կրնայի բաղձալ » Ըն
պէս ահա քորն քրան գաւորութեամբ
բը իմ միտքս ալ կը հանդարտէր , և այ
նուհետեւ շուտով սկսայ նշմարել նորո
սիրոյ ապացոյցները . որովհետեւ երբ
առիթ մը կը պատահէր , որուն համար
եղջօրս օգնութեան պէտքը կը դադար
իսկայն ամենայն սիրով կ'ընդունէր , և
այնքան փութով կը կատարէր , որ իւր
բէք ինձ տեղի չէր մնար կատարեալ
թէ նա զիս չը սիրէր , այնպէս որ իւր
հիւանդութեան և նեղութեանը կը
տայի այն պաղ ընթացքը , զոր միշտ
ուսեցած էի զինքը չը ձանձրացունե
լու համար : Եւ այս առեղծաւոր
միջեւ իւր մահուան օրը անբաժանե
լի մնայ ինձ զոր յետոյ բացատրեց անձ
մը՝ թէ բարեպաշտութեամբ և թէ
մտաց կիրքերով նշանաւոր , որուն
հետ եղջայրս մեծ հաղորդակցութիւն
ներ ունէր առարկիութեան գործա
գրութեան մէջ , Ըն այս անձը մեզ որոտ
մեց որ ինքը շատ բու հետ նաեւ այս
կրթութեան դասն ալ առ ամէր անորմէ
թէ՛ մարդ թող չը սխալի այս զմեզոյն
նին , ով որ ալ բնայ , զինքը չափազանց
սիրով սիրէ . և թէ՛ այս թիւրութիւն
մ'է , որուն մարդիկ բաւական ու շա
ղբութիւն չեն ընձայեր , և ոչ աւել մե
ծութիւնը իրենց նշմարելի չէ . եւ չեն
մտածեր որ այնպիսի սէր մը իրենց մէջ
մտածելով սիրտ մը կը գրաւեն որ պէտք
էր ըլլալ միայն Ընտուծոյ , և այս գողա
թիւն մ'է որ անոր ամենէն թանկագին
սեպհականութիւններէն կը գողուի .

Մենք յետոյ խիստ բաւ նշմարեցինք
որ այս սկզբունքը շտանց ՚ի վեր ա
նոր սրտին մէջ կար . որովհետեւ իրեն
յետու կ'էստար անանձին թղթի
մը մէջ այս խօսքերը գրած էր . « Մի
իւրութիւն է մարդկանց իրարու սե
րով յարելը , թէպէտև կամօք և հա
ձու յարեցնելու քրան . կը խաբեմ »

այն անձինքը՝ որոց մէջ այս իղձը կը ծնուցանեմ, որովհետեւ ես ոչ մէկու վախճանը չեմ, և չեմ կրնար զանիկայ քոհացնել կամ փոխարէնը հասուցանել: Սթէ ես մահկանացու չեմ, ասով իրենց յարելու առարկան կը մեռնի ուրեմն ։ Ոչքան յանցաւոր կ'ըլլայի այս ստուծիւր հաւատացնելու համար, թէ պէտք քաղցր համոզումներով, այնպէս որ ամեն մարդ ուրախութիւնը ընդունելով զայն՝ ինձ ալ ատով բերկ լուծիւն պատճառէին: Այնպէս յանցաւոր եմ, եթէ ես զիս սիրել տալու ջանամ և յանկուցանեմ մարդկան սրտերը գալ ինձ յարելու: Եւս պարտաւոր եմ զգուշացնել ամեն անոնք՝ որոնք պատրաստ են հաւանելու այս ստուծեանը, « թէ պէտք չէ անոր հաւատար, ինչ օգուտ որ ալ ինձ գայ անկից: Եւ նմանապէս պարտաւոր չեմ ինձ յարիլ, որովհետեւ իրենց բոլոր կեանքը և տքնութիւնները պիտի ըլլան հաճոյանալ Նստուծոյ և զայն ուրանելոյ: »

Նա տես ինչ եղանակաւ կը կրթութիւն բերգինքը և ինչպէս գործադիր կը հանդիսանար այս կրթութեան, որուն ես անտեղեակ ըլլալով, խաբուած եի ինքնին շարաշար: Նա իւր կիրառութեանց այս ցոյցերէն կամ նշանակներէն որոց դիպուածով միայն ծանօթացանք, կը տեսնուի իւր վրայ այն հազուագիւտ ձրից և շարհաց մէկ մասը, զոր Նստուած քրիստոնէական կենաց կատարելութեան համար աւոր կը տար: »

Նրաբար՝ Նստուածային փառաց այնպիսի մեծ նախանձաւորութիւն մը ունէր, որ չէր կրնար զսպել իւր արգարացի բարկութիւնը ամեն անոնց դէմ, որոնք զայն ազարտելու կը ժպրահէին, ով որ ալ ըլլար: Սա էր որ իր եռանդը կը բազմապատկէր թագաւ

րին եւս ծառայելու, որ դէմ կը դընէր ամենուն Փարիզի խռովութեան ժամանակ, և այնուհետեւ Պապրոսպէ կը կոչէր այն ամեն իրաւունքները, զորս այս ապստամբութեան կուտային և մեզ միշտ կ'ըսէր. « Պետութեան մը մէջ, ուր հասարակապետութիւնը հաստատուած է, ինչպէս Վենետիկ, թագաւոր մուշանել ջանալը՝ թեթեւամտութիւն է, և շատ չարիքներ կրնայ արտադրել, վասն զի ժողովրդոց ազատութիւնը կը բռնաբարեն, զոր Նստուած տուած է անոնց: Նմանապէս եթէ պետութեան մը մէջ միապետութիւն հաստատուած է, կարող չէ յափշտակել անկէց ոչ որ այն յարգանքը զոր կը պարտի մատուցանել անոր, առանց սեղանակապետութեան մէկ տեսակը յանձն առնելու իրեն վրայ, զոր կը գործէ. վասն զի թագաւոր մը ոչ թէ միայն Նստուծոյ պատկերն է, այլ և անոր իշխանութիւնը նոյն իսկ Նստուծոյ ամենակարող իշխանութեան մէկ կցորդութիւնն է, որուն դէմ դնել անկարելի է, առանց տեսնելու թագաւոր Նստուծոյ հրամանին դէմ դնելու: Եւ ահա այսպէս մարդկանց այս սխալները այնչափ մեծ է, զոր բանիւ յայտնելու չի գար, վասն զի սահիկայ միշտ ընկերակցած է քաղաքական պատերազմի, որ մարդկանց՝ իրենց մերձաւորաց մարդասիրութեան դէմ մեղանշելու նողկալի և ամենա մեծ տեսակն է: Նրաբար այնքան անկեղծութեամբ այս սկզբան կը հետեւէր, որ այն ժամանակին՝ անոր մէջ թերի չը գտնուելու համար, մեծ եւ անթիւ շահեր զոհեց: Սխալութեան կ'ըսէր որ. « Եւս այնքան հեռի եմ այս յանցանքէն, որքան մարդասպանութեան և կամ աւազակութենէն: Սեղանակապետութեան ոչ ինչ իրեն ընտրութեան աւելի հակառակ չէր, որքան սահիկայ: »

Ասոնք են զգացումները զորս ունէր առ Թագաւորն , և ասոնց մէջ Թերի գտնուողներուն դէմ ալ անհաշտ էր , և այս իրեն բնական բան մը չէր և ոչ խօջ սիրոյ աղդեցումթէ մը յառաջ կուգար , որովհետեւ զարմաւնալի քաղցրութիւն մը ունէր առ ամենայն մարդիկ , որոնք մասնաւորապէս իրեն անձին դէմ կը մեղանչէին Լայն պէս որ երբէք խորուրի չէր ըներ ասոնց և միւսներուն մէջ , և շուտ մը բարբոսիկն կը մոռնար այն ամեն թշնամանքները , որ իրեն դէմ եղած էին , մինչեւ անգամ եթէ զայն իրեն յիշեցնել հարկ ըլլար , բաւական աշխատութիւն և թէ անոնց ամեն պարագաները խօսիլ պէտք էր : Եւ երբ ասոր վրայ կը զարմանայինք երբեմն , կ'ըսէր մեզ թէ՛ « Խ զարմանաք ասոր երբէք , ասիկայ պա երեսս բան մը չէ՛ , այլ իրական մոռացութիւն , որովհետեւ ամենեւին չեմ յիշեր » : Եւ յիշուի կը նշմարեինք որ երբէք տպաւորութիւն չէր ըներ իւր վրայ որ և իցէ նախատինք և զրկողութիւն , որն որ իրեն անձին դէմ եղած էր , վասն զի զանոնք շատ գիւրութեամբ կը մոռնար , մինչդեռ ինքը այնպիսի զօրաւոր յիշողութիւն ունէր , որ շատ ժամանակ բռած էր մեզ թէ՛ ոչ ինչ չեմ մոռանար այն ամեն բաներէն , զորս միտքս պահելու գիտաւորութիւն կ'ունենամ :

Եւ քաղցրութիւնը պահեց մինչեւ վերջը , վասն զի իւր մահէն քիչ ժամանակ յառաջ թշնամանք մը կրեց մէկ բանի մասին , որուն մէջ իր սիրտը շատ զգայուն էր , և այս ալ այնպիսի անձէ մը՝ որ մեծ երաստօրներ ընդունած էր իրմէ , և միւսնոյն ժամանակ մէկ ծառայութիւն՝ ալ ըրած էր իրեն այս անձը , որուն շնորհակալ եղաւ այնքան մեծարանօք և քաղաքավարութեամբ որ չափազանց էր , սակայն այս մոռաւ

ցութիւն չէր , որովհետեւ մի և նոյն ժամանակի մէջ եղաւ՝ բայց և այն պէս այս ապացոյց մ' էր , որ եղբայրս իրեն անձին դէմ եղած զրկանաց երբէք վերժինդրութիւն չունենալէ զինի , ներողութիւնը կատարեալ էր : Իսկ այս ձիբերը՝ զոր մանրամասնաբար կը թուարկեմ , համառօտիւ կը տեսնուին աւելի պայծառ այն նկարագրութեան մէջ զոր ինքնին յօրինեց փոքրիկ թղթի մը վրայ , զոր արժան է յառաջ բերել :

« Եւ սիրեմ աղքատութիւնը՝ որովհետեւ Անուս Բրիտոսս սիրեց : Եւ սիրեմ ամեն բարութիւններ կամ հարատուութիւններ , վասն զի անոնք թըշուառաց օժանդակելու մէկ մէկ միջոցներ են Եւ պահպանեմ հաւատարմութիւն առ ամենայն մարդիկ , Եւ բէք չարին չար չեմ հատուցաներ , այլ կը մաղթեմ անոնց համար իմ ունեցածիս նման վիճակ մը , ուր չին ընդունիր չար , և ոչ բարի մարդկանց մեծ մասէն : Եւ ջանամ միշտ ըլլալ անկեղծ , ճշմարտասեր և հաւատարիմ դէպ ի ամեն մարդիկ : Եւ որտի գորով մը ունիմ ամեն անոնց համար զոր Աստուած ինձ հետ սերտ միացուց , թէ առանձին և թէ ի հրապարակի իմ բոլոր գործոցս մէջ Եւստու ծոյ տեսողութիւնը կը հաւատամ ունենալ , որ պիտի դատէ զանոնք , և որուն բողոքն ալ արդէն անոր նուիրած եմ : Եւ հաւաստիկ բողոք զգացումներս և ես իմ կենաց ամեն օրուան մէջ կ'օրհնեմ իմ Վրկիչս՝ որ այս ամենը ինձ տուաւ , և որ տկարութիւն թշուառութիւն , ցանկութեամբ , հպարտութեամբ և փառասիրութեամբ լեցուն մարդէն կազմեց մարդ մը , որ ազատ է այս ամեն չարիքներէն՝ այն շնորհաց զօրութեամբ , որուն պարտական եմ ամենայն ինչ , զի ինքիրմէս չունիմ՝ բայց միայն աղէտք և սուկուսն » :

(Երանայիկ) :

ՀԱՄԱՌՈՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԶՈՐ ԵՒ ՈՍՏԱՆ ԳՌԱՒԱՌԱՑ

(Հարուակութիւն, տես թիւ 9)

Խառնուրդ գիւղը որ Մնկղայ գետի եզերք և Շամիրամայ առուակին վրայ շինուած է Սա ունի 20 տուն Վիւրդ և 2 տուն Հայ, 1834 թուականէն յառաջ 43էն աւելի հայ բնակիչներ կային, իսկ 1834 թուականին քիւրդ պէյերու ա տեն նոյն կողմի բարբարոս Վիւրտերը զհայերն հալածելով, այժմ անոնք կը բնակին : Իւր բոլորտիքը ունի շատ մը ջուրեր և աղբիւրներ . իսկ իւր հիւսիստեղծը քարանձառ մը կայ, որուն ներքեւէն կ'անցնի Մնկղայ գետը . գետին վրայ փայտաշէն կամուրջ մը կայ որուն տակէն Շամիրամայ առուակը անցնելով դէպի հիւսիս երթալով մինչև Վան քաղաքի դաշտավայրը կը հասնի . սոյն կամուրջին մօտ երկու ջուրերը իրար կը խառնուին . այս պատճառաւ է որ նոյն գիւղի անուն խառնուրդ կ'ըսուի . իսկ գետը դէպի յարեւմուտ երթալով 6 փամ հեռաւորութեամբ առանց ոգուտ մը ունենալով Վարդպարտի բլրակի մօտ ծռվը կը թափի : Վիւղիս արեւմտեան կողմը քառասուն ջրաղացներ կան և ամեն մէկ տեղ աննելով Շամիրամայ առուագետէն կը դառնան : Իսկ հարաւակողմը Հայոց եկեղեցի մը կայ կամարաշէն և սրբատաշ քարերէ շինուած յանուն սուրբ Վեորգայ, բայց այժմ այլազգիք իրենց աղօթատուն և մզկիթ ըրած են :

Այս գիւղէն մեկնեցանք և հասանք Քղի անունով Հայոց գիւղը . ուր 33 Հայ տուն բնակիչ իւր մէջ կը պարու նակէ . իւր դիրքը ընդարձակ է և գեղեցիկ, ունի ընդարձակ կամարաշէն եկեղեցի մը յանուն սուրբ Աստուածածնայ կառուցուած, 40 կանգուն

բարձրութեամբ, 40 կանգուն լայնութեամբ, սակայն եկեղեցին անզարդ է :

Իւր արեւմտեան կողմը ունի գեղեցիկ բարեհամ շատ մը աղբիւրներ . այս աղբիւրներու շատութեամբ շամբալից ընակ մը կը կազմուի որուն եզերքը այգիներով և ծառատունկով զարդարուած է . իսկ արեւելքէն սակաւ ինչ ընդ հարաւակողմը 3 մղոն տարածութեամբ գիւղիս սեպհական կալուած արգասաւոր ջրարի գաշտ մը կայ . մեծ առուակ մը արեւելքէն գալով գիւղիս եզերքէն անցնելով վերայ յիշեալ գաշտին մէջ կը թափուի . Վիւղը այս գիւղիս մէջ օթագայելով, առու լօտեան ժամը 1ին մեկնեցանք : Իսկ հասանք Սճարանց անունով Հայոց գիւղը, որ սուրբ Աստուանց նահաւտակութեան տեղն է . Պարսից քորքը վրանին հասնելով ամենքն ալ ոչխարի նման սրախողտող կըսպանեն . որոյ պատճառաւ է և գիւղին անունը Սճարանց ըսուիլը ըստ աւանդութեան : Բնակիչները ամենն ալ սնանկութեան եւ աղքատութեան մէջ կը տառապին : 1848 թուոյն Վան քաղաքացի Հայրապետ պէյ անուն երևելի անձը այս գիւղը իւր շրջակայ հողերով միատեղ տէրութենէն ծախու առնելով իւր սեպհական կալուած ըրած է և մեծաշէն սպարան մըն ալ շինած է գեղեցիկ վանդակապատ և շատ մը սենեակներով զարդարուած :

Իսկ հիւսիսային կողմը փոքր բլրակ մը կայ, որ իւր գլուխը ունի մեծ եկեղեցւոյ մը աւերակը, որուն լայնութիւնն է 28 ոտնաչափ և փոքր մատուռ մը յանուն սրբոց Աստուանց : Կըսուի թէ այս տեղը ճիշտ այն սրբոց արեան կաթիլներով ոռոգուած է և իւրեանց մարմին այս տեղ անփոփուած են : Իսկ արեւելեան կողմը ունի երկայնանիստ գաշտ մը, որոյ տարածութիւնը մէկ ու